Երաժշտական ծիսական ներկայացումների մեդիաուրբաթ. Մանկական հարսանեկան ծեսի սցենար

Սրահում խառը կանգնած խմբերով ծաղում են ձեռնախաղ, հաշվերգով հաշվում են և այլն: Երկու երեխա տիկնիկները ձեռքերին մոտենում են իրար:

1-ին երեխա – Քո տիկնիկի անունն ի՞նչ է:
2-րդ երեխա – Սաթո: Բա քոնի անունն ինչ է:
1-ին երեխա – Կարո:
2-րդ երեխա – Կգա՞ս տիկնի պսակ խաղանք:
1-ին երեխա – Կգամ, արի խաղանք:
2-րդ երեխա – Էրեխեք, էկեք տիկնի պսակ խաղանք:

Բոլորը շրջապատում են տիկնիկներին, երգում են «Պսակ - պսակ» երգը, որի ընթացքում կանգնում են նախօրոք ընտրած տեղերը:

1. «Պսակ - պսակ»
2. «Այ ֆոռկա»

Երգի ընթացքում տիկնիկ փեսային բեղ են կպցնում:

Մի տղա, որը փեսացուներից մեկն է, կանգնում է տիկնիկ փեսացուի կողքին: Աղջիկներից մեկը հարսնացուին հարցնում է.

-Ո՞ր մեկին ես հավանում: Մի ամաչի, ասա՛: Որին կասես, որին կհավանես, էն ա:
Երգում և պարում են.

3. «Վեր, հա վեր վեր»

Հարսնացուի տիկնիկը երգի ընթացքում պտտվում է փեսացուների շուրջբոլորը, «ուսումնասիրում» նրանց և, «ընտրելով» տիկնիկ փեսացուին, կանգնում կողքին:

Աղջիկները շրջան են բռնում հարսնացուի շուրջբոլորը:

4. «Աղջկեք, պար բռնեցեք»

Երգում են երկու տուն:

Աղջիկներից մեկը առաջ է գալիս ու աղաղակում.

- Հարսի անունը Արմիկ չի, հարսի անունը Սաթո յա, Սաթո:

Երեք հոգի առաջ են գալիս ու բացականչում.

- Վու՛յ, քոռանամ ես, խայտառակվեցինք, հարսի անունը Արմիկ չի, հարսի անունը Սաթո յա, Սաթո:

Բոլորը միասին.

- Վա՛յ, հարսի անունը Սաթո յա, Սաթո՛:

5. «Սաթոյին գովելու համար ենք եկել»

Բոլորը.

-Էկա՛ն, էկա՛ն, բետ-բետ դիզան, էն ովքե՞ր էն:

6. «Էն դիզան»

Բոլորը կանգնում են կիսաշրջանաձև՝ թողնելով ազատ տարածք, որտեղով էլ առաջ են գալիս և անցնում ռեսները, տիրացուները, հարսն ու փեսան:

Երկու հոգի առաջ են գալիս.

- Էս ի՛նչ սիրուն հարս ու փեսա են, լավ էլ իրար սազում են:
- Տեր հայր, հարս ու փեսին օրհնի:

Առաջ է գալիս Տերտերը.

- Պսակ, պսակ, տիկնի պսակ,

Արջի քոլոլ, դեղին դմակ,
Կուժն ու կուլեն գլխիդ կոտրեմ,
Տե՞ր ես, թե չէ:

Փեսա.

- Տեր եմ:

Բոլորը շրջան են կազմում և հարսանեկան ծիսական «Ծառ խնկենին որ ծաղկեցավ» երգի ուղեկցությամբ պարում են Գովընդ:

7. «Ծառ խնկենին որ ծաղկեցավ»

Երեխաներից մեկը բացականչում է.

- Հասե՛ք, հարսի ուշքը գնաց:

Մեկ ուրիշը.

- Վա՛յ, բա ի՞նչ անենք՝ ուշքի գա:
- Թող փեսեն մի մատանի տա հարսին, ուշքի կգա:

«Փեսան» մատանին հագցնում է «հարսի» մատին, վերջինս ուշքի է գալիս: Տղաներից մեկը.

- Հլա մի հարսին պարացրեք, ավելի լավ ուշքի կգա:

8. 12 ոտ

Բոլորը ուրախ բացականչում են, թռչկոտում ու բացականչում.

- Թազվորի մեր, դուրս արի:

9. «Թազվորի մեր»

Վերջին տողը կրկնում են երեք անգամ: «Սկեսուրը» բողոքում է.

- Գլուխ դմփո՞՛ղ: Ակաս-մակաս, էդ էր պակաս: Է՛դ ով է ասել, իմ հարսը գլուխ դմփող չի, իմ հարսը բեր գնացող է, իմ հարսը կեր-խում անող է, ինձ զարդարող է: Հլա մի պար ածեք, իմ հարսի հետ պարեմ:

10. Մանդր վերվերի

Պարից հետո երգում են.

11. Շախկր, շուխկր

Առանց ընդհատելու անմիջապես պարում են.

12. Յալլի